

10 Եւ զայս բանս այսպէս ի ձեռն պատգամաւորի խաւսեցեալ Մամիկոնենին Վահանայ ընդ Նիխորոյ՝ ապա ինքն իսկ եկեալ տեսանէր զնա յատենի ժամու. վասն զի ընդ ծագել արեւուն եկն Մամիկոնեանն առ Նիխոր: 11 Եւ Նիխորոյ տեսեալ զՄամիկոնեանն Վահան եւ զայլ նախարարսն զուխտակիցսն ընդ նմա՝ ցնծալից ուրախութեամբ բազում ժամս ընկալեալ ի գիրկս իւր՝ ողջունէր զնա. տայր եւ զողջոյն զԱրեաց տեառնն Վաղարշու եւ զամենայն աւագանւոյն. մի ըստ միոջէ յանուանէ ողջունէր եւ զեկեալ նախարարսն Մամիկոնենին Վահանայ՝ յոյժ սիրով, նոյնպէս զամենայն արս զնոյն, զաւագս եւ զկրսերս: 12 Եւ լուեալ Մամիկոնենին Վահանայ ՝ զողջոյն Արեաց տեառնն եւ զողջոյն ամենեցունց զբանն աւագանւոյն՝ շնորհակալութեամբ զոհանայր երկրպագելով եւ իսնդալից ուրախութեամբ ընդունէր: 13 Եւ հրաման տուեալ Նիխորոյ՝ զամենայն արս զաւրուն Վահանայ Մամիկոնենի ի ներքս թողուլ, նոյնպէս եւ աւագ Պարսիկ որերոյ² ի ներքս կալ յատենին հրամայէր: 14 Եւ կատարեալ զամենայն ասացեալք Նիխորոյ, եւ լցեալ ամենայն ատեանն արամբք որ ընդ Մամիկոնենին Վահանայ էին, եւ այլ Պարսիկ որերով՝ սկսանէր խաւսել Նիխոր ընդ Մամիկոնենին Վահանայ եւ ասէր.

15 «Թեպէտ եւ աշխարհակցութեան բնութեամբ չես կեցեալ ընդ իս, այլ ըստ բազում անգամ տեսանելոյ զքեզ ի դրան եւ լսելոյ յաշխարհի մարդկանէ, ի Հայոյ³ եւ ի Պարսկէ, ոչ յանճանաչող եւ յանպիտան⁴ մարդկանէ, այլ ի լաւ եւ ի հայեցող եւ յիմաստուն որերոյ, զոր այժմ յայտնապէս փորձիւ ի միտ առեալ գիտացաք ամենեքեան. զի գործ պատերազմի որպէս քաջութեամբ⁵՝ նոյնպէս եւս առաւել խոհականութեամբ եւ իմաստիւք վճարի. որպէս եւ դու զերկոսեանն զայդ ի քում անձին լիով ետուր տեսանել ամենայն Արեաց աշխարհի եւ ճանաչել: 16 Զանզի զքաջութիւն ցուցեր սակաւ արամբք. քանզի ցանկ կաս կռուելով⁶ սակաւութեամբ ընդ բազումս, եւ մեծամեծ զայդպիսի վնասանի առնելով եւ աշխատ ունելով: 17 Եւ զիմաստութիւն յայտ արարեր՝ գիտելով զժամ կռուոյն եւ զտեղի տալոյ, եւ անվնաս զգունդն ի միջի ունելոյ, եւ միւսում եւս ժամու գործոյ պատրաստ լինել եւ չերկնչել: 18 Չի եթէ ոչ երկու այդ իրք ի քեզ լի եղեալ էին՝ զհա՛րոյ հնար լինէր քեզ այդչափ կարի սակաւ եւ թուով արամբք կալ ընդդէմ այնչափ անթիւ բազմութեան պատերազմող

1 Զ. զողջուն... զողջուն

2 ԶԱտ. որերոյ

3 Ատ. ի հայոց

4 ՏՏ. եւ ոչ յանպիտան

5 ՏՏ. գործ պատերազմի ունի քաջութեամբ. Զ. գործ պատերազմի ողջալ (?), քերուած, վրան պատիւ) քաջութեամբ

6 ԶՏՏ. ցանկաս կռուելով. այսպէս ըստ Ն. Բ.